Հաստատում եմ՝

Երևանի Ստ. Զորյանի անվան թիվ 56

հիմնական դպրոցի տնօրեն Ս. Գալստյան

01.09.2023

# Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

ՀՀ ԿԳՄՍՆ

,ԵրևանիՍտ. Զորյանի անվանթիվ 56 հիմնական դպրոց"

ՊՈԱԿ

Դասարան՝6 Ա

Դասղեկ՝ Լ. Պողոսյան

2023-2024ուսումնական տարի

## Նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

## 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում

Ապահովել սովորողի անվտանգ կենսագործունեությունը. սանիտարահիգենիկ կանոնների պահպանումը, ուսումնական գործընթացի համար անվտանգ միջավայրի ապահովումը

- Տանել դաստիարակչական աշխատանք սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժների հետ
- Մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման ապահովում՝ ըստ անհրաժեշտության
- Իրազեկել դպրոցի ներքին կարգապահական կանոններին , սովորողների իրավունքներին և պարտականություններին, աղետների և ռիսկերի նվազեցման անվտանգության կանոններին
- Ապահովել դպրոց-ծնող երկկողմ սերտ համագործակցություն՝ նպաստել մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը, ծնողներին ներգրավել դպրոցի հասարակական կյանքում և դարձնել մասնակից ուսումնադաստիարակչական աշխատանքներին
- Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, կազմել և դպրոցի տնօրենությանը ներկայացնել սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն
- Նպաստել սովորողի՝ քաղաքացու արժեհամակարգի ձևավորմանը, ազգային արժեքների գիտակցմանն ու արժևորմանը, աշխարհայացքի ընդլայնմանը,ճանաչողական կարողությունների և հմտությունների զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանը

## I կիսամյակ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I շաբաթ | ➢ **Ծնողական ժողովի կազմակերպում.**<br>**ա) Դասարանի ծնողական խորհրդի կազմի ընտրություն**<br>**բ) Կազմակերպչական հարցեր**<br>➢ **Դասագրքերի բաժանում**<br>➢ **Դասասենյակների նախապատրաստում**<br>➢ Դաս ,Գիտելիքը ուժ էն խորագրով՝ նվիրված Գիտության և դպրության օրվան<br>➢ Զրույց,Սովորողիիրավունքներնուպարտականություններըն թեմայով | Սեպտեմբեր 01.09-02.09 | Դասղեկ ծնողներ դասարան |
| II շաբաթ | ➢ **Սովորողների և ծնողների իրազեկում դպրոցի ներքին կարգապահական կանոններին , սովորողների իրավունքներին և պարտականություններին**<br>➢ Զրույց,Ի՞նչ է հանդուրժողականությունըն թեմայով. մտքերի փոխանակում<br>➢ Անդրադարձ անձնական հիգիենայի կանոններին: | Սեպտեմբեր 05.09-9.09 | Դասղեկ ծնողներ դասարան |
| III շաբաթ | ➢ **Սովորողների և ծնողների իրազեկում աղետների և ռիսկերի նվազեցման անվտանգության կանոններին**<br>➢ Զրույց ,Իմ քաղաքի պատմությունըն թեմայով. ներկայացնում են աշակերտները | Սեպտեմբեր 12.09-16.09 | Դասղեկ ծնողներ դասարան |
| IV շաբաթ | ➢ **Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին:**<br>**Անհատական աշխատանք սովորողների և նրանց ծնողների հետ՝ ըստ անհրաժեշտության հաճախումներ, ուշացումներ, առաջադիմություն**<br>➢ Զրույց,Անկախությունը՝մեծագույնարժեք և նվաճումն թեմայով (ցուցապաստառներիպատրաստում)<br>➢ Զրույց ,Հայկական ավանդույթներըն թեմայով<br>➢ Զրույցնվիրված 44 օրյապատերազմիտարելիցին<br>➢ Զրույց ,Մերօրյա զինվորների սխրանքներըն թեմայով | Սեպտեմբեր 19.09-23.09 | Դասղեկ դասարան |
| V շաբաթ | ➢ **Խորհրդակցում դասավանդող ուսուցիչների հետ դասարանի ուսումնադաստիարակչական խնդիրների վերաբերյալ**<br>➢ Զրույց՝,Կիբեռանվտանգությունն թեմայով<br>➢ Զրույց՝,Ինչպես լինել լավ ընկերն թեմայով | Հոկտեմբեր 03.10-7.10 | Դասղեկ դասարան |
| VI շաբաթ | ➢ Զրույց `,Ինչպես պահպանել բնությունըն թեմայով:<br>➢ Հիգիենայի մասին: | Հոկտեմբեր 10.10-14.10 | Դասղեկ դասարան |

| | | | |
|---|---|---|---|
| VIIշաբաթ | ➢ **Սովորողների նախնական առաջադիմության արդյունքների ամփոփում, իրազեկում ծնողներին, առանձին դեպքերում քննարկում դասավանդող ուսուցիչների, անհատական աշխատանք ծնողների հետ՝ ըստ անհրաժեշտության :**<br>➢ Զրույց ,Ուժեղ լինել, նշանակում է…ճ թեմայով | Հոկտեմբեր<br>17.10-21.10 | Դասղեկ<br>զինղեկ<br>դասարան |
| VIII շաբաթ | ➢ **Սովորողների նառաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին:**<br>➢ Էքսկուրսիաներ դեպի Երևանի թանգարաններ | Նոյեմբեր<br>01.11-04.11 | Դասղեկ<br>դասարան |
| IXշաբաթ | ➢ **Էլեկտրոնային օրագրերի մասին իրազեկում**<br>➢ Աշակերտներին ուղղորդել քայլել նորագույն տեխնոլոգիաներին ընդառաջ | Նոյեմբեր<br>07.11-11.11 | Դասղեկ<br>դասարան |
| Xշաբաթ | ➢ **Աշակերտների առաջադիմությանը վերաբերող հարցեր.աջակցել դժվար առաջադիմող աշակերտներին:**<br>➢ Զրույց-քննարկումներ տվյալ թեմայի շուրջ | Նոյեմբեր<br>14.11-18.11 | Դասղեկ,<br>դասավանդող<br>ուսուցիչներ |
| XI շաբաթ | ➢ Զրույց ,Բարեկրթության կանոններըճ թեմայով. մտքերի փոխանակում<br>➢ Զրույց,Ինչպես պահպանել առողջությունը ճիշտ<br>➢ սնվելովճ թեմայով<br>ա) որն է առողջ սնունդը<br>բ) անիմացիոն ֆիլմերի դիտում և քննարկում | Նոյեմբեր<br>21.11-25.12 | Դասղեկ<br>զինղեկ<br>դասարան |
| XIIշաբաթ | ➢ **Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին:**<br>➢ **Անհատական աշխատանք խնդրահարույց սովորողների հետ**<br>➢ Զրույց ,Ճիշտ և սխալ արարքներն ու դրանց հետևանքներըճ թեմայով | Դեկտեմբեր<br>29.11-03.12 | Դասղեկ<br>դասարան |
| XIII շաբաթ | ➢ Զրույց ,Սպիտակի երկրաշարժից տարիներ անցճ թեմայով.աշակերտների պատրաստվածությունը բնական և տեխնածին աղետներին, անհրաժեշտ կարևոր գործողությունների, միջոցառումների իրազեկում՝ արտակարգ իրավիճակների ժամանակ | Դեկտեմբեր<br>05.12-09.12 | Դասղեկ<br>դասավանդող<br>ուսուցիչներ |
| XIV շաբաթ | ➢ Զրույց ,Շրջակա միջավայրի պահպանումըճթեմայով<br>➢ Զրույց ,Պետք է մաքուր պահել ոչ միայն շրջակա միջավայրը , այլ նաև մեր դասարանըճ թեմայով | Դեկտեմբեր<br>12.01-16.01 | Դասղեկ<br>դասարան |
| XV շաբաթ | ➢ Զրույց ,Սուրբ Ծննդյան խորհուրդըճ թեմայով<br>➢ Դասարանական անկյունների ձևավորում<br>➢ **Առաջին կիսամյակի արդյունքների վերլուծություն՝ ինչ տվեցինք- ինչ ստացանք**<br>➢ **Առաջադիմության արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը** | Դեկտեմբեր<br>19.01-23.01 | Դասղեկ<br>դասարան |

| | | | |
|---|---|---|---|
| | ➢ Ծնողական ժողով. իրազեկում առաջադիմության արդյունքներին | | |

## II կիսամյակ

| | | | |
|---|---|---|---|
| XVI շաբաթ | ➢ Զրույց,Ինչպես անցկացրեցինք Ամանորյա տոներըն թեմայով | Հունվար 9.01-13.01 | Դաղեկ դասարան |
| XVII շաբաթ | ➢ Ամանորյա թեմաներով մուլտֆիլմերի դիտում | Հունվար 16.01-20.01 | Դաղեկ դասարան |
| XVIII շաբաթ | ➢ **Հայոց բանակի դերը մեր ապագա սերունդների գիտակցության մեջ:**<br>➢ Զրույց ,Մեր փառապանծ հայոց բանակն թեմայով<br>➢ Դասարանական անկյան ձևավոնում՝ ցուցապաստառների պատրաստում նվիրված Հայկական բանակի կազմավորման տոնին և մերօրյա հերոսների հիշատակին | Հունվար 23.01-27.01 | Դաղեկ դասարան |
| XIX շաբաթ | ➢ **Ծնող–ուսուցիչ հարաբերությունների ուղղակիորեն ազդեցությունը աշակերտների առաջադիմության վրա:**<br>➢ Զրույց ,Երբ շրջապատված ես սիրելի մարդկանցովն թեմայով<br>➢ Զրույց ,Նա, ով ամեն օր իմ կողքին էն թեմայով | Փետրվար 01.02-03.02 | Դաղեկ դասարան |
| XX շաբաթ | ➢ **Տյառնմ ընդառաջը Հայոց եկեղեցու տոներից**<br>➢ Զրույց ,Հայկական տոներ, ծեսեր և ավանդույթներն թեմայով | Փետրվար 06.02-10.02 | Դաղեկ դասարան |
| XXI շաբաթ | ➢ **Սարգիս զորավարի հիշատակության օր**<br>➢ **Գիրք նվիրելու տոնի խորհուրդը**<br>➢ Զրույց ,Գիրքը՝ լավ ընկերն թեմայով (մտքերի և կարդացած լավագույն գրքերի փոխանակում) | Փետրվար 13.02-17.02 | Դաղեկ դասարան |
| XXII շաբաթ | ➢ **Ի՞նչ են սովորեցնում մեզ Հովհ. Թումանյանի հեքիաթների հերոսները**<br>➢ Հովհաննես Թումանյանի հեքիաթների նկարազարդումներ (նկարներ, ապլիկացիաներ, քանդակներ, կոլաժներ և այլն)<br>➢ Զրույց-քննարկումներ ,Եթե ես լինեի նրա փոխարեն...ն թեմայով (աշակերտները՝ Հ. Թումանյանի հերոսների փոխարեն)<br>➢ Մուլտֆիլմերի դիտում | Փետրվար 20.02-24.02 | Դաղեկ դասարան |
| XXIII շաբաթ | ➢ **,Գարնանային տրամադրությունն**<br>➢ Զրույց ,Գարունը մեր կյանքումն թեմայով<br>➢ Դասարանական անկյան ձևավորում | Մարտ 01.03-03.03 | Դաղեկ դասարան |
| XXIV շաբաթ | ➢ **Կանանց միջազգային օր**<br>➢ Բացիկների պատրաստում, դասարանական անկյան ձևավորում | Մարտ 06.03-10.03 | Դաղեկ դասարան |
| XXV շաբաթ | ➢ **Շրջակա միջավայրի պահպանումը**<br>➢ Դասարանական մրցույթ՝ ցուցապաստառների պատրաստում ,Դարձիր բնության ընկերըն թեմայով | Մարտ 13.03-17.03 | Դաղեկ դասարան |
| XXVI շաբաթ | ➢ **Սովորություններ և կամք, ,Ոչն ասելու նուրբ արվեստը**<br>➢ Օգնել աշակերտներին սովորել ,**Ոչն** ասել, եթե անգամ դա հակասում է իրենց սկզբունքներին | Մարտ 20.03-24.03 | Դաղեկ դասարան |

| | | | |
|---|---|---|---|
| XXVII<br>շաբաթ | ➢ **Աշակերտների ընտանեկան խնդիրների ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա:**<br>➢ Զրույց ,Ով է իսկական ընկերըն թեմայով. մտքերի փոխանակում | Ապրիլ<br>03.04-07.04 | Դասղեկ<br>դասարան |
| XXVIII<br>շաբաթ | ➢ **Սովորողների վարքագծի խնդիրների քննարկում**<br>➢ Զրույց-քննարկում ,Ինչո՞վ են պայմանավորված վարքագծի խախտումներըն թեմայով | Ապրիլ<br>10.04-14.04 | Դասղեկ<br>դասարան |
| XXIX<br>շաբաթ | ➢ **Սովորողների ընթացիկ առաջադիմության քննարկումներ**<br>➢ Զրույց-քննարկում ,Կարևորու՞մ եք արդյոք գնահատականըն թեմայով<br>➢ Աշակերտների ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն | Ապրիլ<br>17.04-21.04 | Դասղեկ<br>դասարան |
| XXX<br>շաբաթ | ➢ **Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր**<br>➢ **Մեր երկիրը երեկ,այսօր, վաղը**<br>➢ Այց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և Ցեղասպանության թանգարան | Ապրիլ<br>19.04-24.04 | Դասղեկ<br>դասարան |
| XXXI<br>շաբաթ | ➢ **Հայաստանի ապագան երիտասարդների ձեռքերում է:**<br>➢ **Քաղաքավարություն, մշակույթ, վարվելակարգ**<br>➢ Օգնել հասկանալ երիտասարդների դերը իրենց հայրենի երկրի ապագան կերտելու մեջ | Ապրիլ<br>24.04-28.04 | Դասղեկ<br>դասարան |
| XXXII<br>շաբաթ | ➢ **Հաղթանակների ամիս.**<br>➢ **Մայիսյան եռատոն**<br>➢ Զրույց-քննարկում ,Մայիսի 9-ը և մեր նվաճումները թեմայով<br>➢ Այց Սարդարապատի հուշահամալիր-թանգարան | Մայիս<br>01.05-05.05 | Դասղեկ<br>դասարան |
| XXXIII<br>շաբաթ | ➢ **Հայոց բանակի դերը մեր ապագա սերունդների գիտակցության մեջ**<br>➢ Զրույց ,Մեկ ազգ, մեկ բանակն թեմայով. մտքերի փոխանակում | Մայիս<br>08.05-12.05 | Դասղեկ<br>դասարան |
| XXXIV<br>շաբաթ | ➢ **Երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում**<br>➢ **Առաջադիմության արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը**<br>➢ **Ծնողական ժողով՝ իրազեկում առաջադիմության արդյունքներին**<br>➢ **2-րդ կիսամյակում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների վերլուծություն, հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը:** | Մայիս<br>15.05-19.05<br><br>22.05-26.05 | Դասղեկ<br>դասարան |

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական աշխատանքները

Քաղաքացիական,բարոյական

Կազմակերպել զրույցներ կյանքի, չարի, բարու, մարդասիրության, երախտագիտության, ներողամտության մասին՝ վկայակոչելով հայտնի մարդկանց կյանքը, առյյթները, մտքերը:

Հոգևոր դաստիարակություն

Նպաստել աշակերտների ազգային ոգով դաստիարակելուն՝ պատմելով ազգային սովորույթ-ների, ծեսերի, ազզգային հերոսների, հայ մարդու վարքի և ապրելաձևի, հոգեբանության մասին: Զրուցել ազգային տոների մասին՝ կազմակերպելով միջոցառումներ, զեկուցումներ ազգային արժեքների մասին:

Գեղագիտական

Կազմակերպել զրույցներ գրականության, կերպարվեստի, երգ ու պարի մասին՝ ներկայացնելով հայ գրողներին, հայ երգի երախտավորներին, կերպարվեստի երախտավորներին՝ լսելով երգեր, դիտելով նկարներ, տեսանյութեր:

Ֆիզիկական առողջության

Սովորեցնել հետևել անձնական հիգիենային, պատրաստ և մաքուր հաճախել ֆիզկուլտուրայի դասերին, կատարել ֆիզիական վարժություններ՝ հաշվի առնելով տարիքային առանձնա-հատկությունը և անհատի հնարավորությունները:

Աշխատանքային դաստիարակություն

Հետևել և նպաստել աշակերտների ինքնակրթությանը և ինքնազարգացմանը, խթանել նրանց ակտիվ մասնակցությանը արտադասարանային, արտադրպրոցական միջոցառումներին:Սովորեցնել սովորել, ինքնուրույն աշխատել:

Իրավական դաստիարակություն

Սովորեցնել լինել կարգապահ, կատարել դպրոցի կանոնադրության պահանջները, կարողանալ պաշտպանել անձնական շահերը, դպրոցի շահերը, ընտանիքի և պետության շահերը: Լինել հավատարիմ օրենքով սահմանված կարգին:

Կազմակերպել զրույցներ շրջակա բնության պահպանության անհրաժեշտության մասին, խոսել բնության բարիքների, հասարակության և բնության անքակտելի կապի մասին:Մասնակցել դպրոցամերձ հողամասը խնամելու, բույսեր աճեցնելու, ծառերը խնամելու գործին:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Կազմակերպել զրույցներ հայրենիքի, հայրենի տան, բնության մասին՝ խոսելով դրանց պահպանության և պաշտպանության անհրաժեշտության մասին՝ վկայակոչելով մեր նախնիների քաջ անցյալը, հերոսական պատմությունը:

Դպրոց –ընտանիք կապ

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է  պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն, դառնան ընտանիքին, հայրենիրքին, պիտանի մարդիկ:

Ծնողական ժողովներ

| Անցկացման օրը | Քննարկվող հարցերը | Համառոտ բովանդակությունը | ծանոթություն |
|---|---|---|---|
| **7.09.2023** | **Կազմակերպչական հարցեր Ծնողկոմիտեի ընտրություն, դասագրքեր, հագուստ, ուշացումներ** | **Ներկայացնել դպրոց հաճախելու պահանջները, էլեկտրոնային օրագրերից օգտվելու, դպրոցի հետ  կապ ունենալու անհրաժեշտությունը:** | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

Դասագրքերի բաշխում-  Դպրոցի գրադարանից բաշխվել են հետևյալ դասագրքերը

Մայրենի
Ռուսաց լեզու
Անգլերեն
Ֆրանսերեն
Մաթեմատիկա
Աշխարհագրություն
Համաշխարհային պատմություն
Հայոց պատմություն
Բնագիտություն
Ինֆորմատիկա
Տեխնոլոգիա
Երաժշտություն
ՀԵՊ